Այս մեխանիզացիան թուլացրել է կենդանական բանուժի պահանջը գյուղերում՝ գլխավորապես հողամշակության մեջ և շատ ավելի պակաս տրանսպորտի մեջ։ Առ 1 հունվարի 1942 թ. ունենք հետևյալ պատկերը ըստ վարչական շրջանների (աղյուսակ № 5)։

Աղյուսակ 6

Անասունների քանակը ըստ տեսակների առ 1 հունվարի 1942 թ.

Շրջաններ	Խոշոր եղջերավոր	Գոմեշներ	Ոչխարներ	Այծեր	Խոզեր	Ձիեր	Էշեր	Ուղտեր	Ջորիներ
Գորիսի	18·631	646	49·367	4·274	911	1·268	2·511	9	171
Սիսիանի	26·899	238	50·799	5·102	752	2·288	687	16	48
Կապանի	20·718	284	38·313	17·027	3·000	1·583	2·575	—	415
Մի հարյուր բնակչին հաշված՝									
Գորիսի	70	2·4	180	16	3·4	5	9·0	—	0·6
Սիսիանի	98	0·8	185	19	2·8	8	2·5	—	0·2
Կապանի	65	0·9	129	54	9·4	5	8·0	—	1·3

№ 5 աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ խոշոր եղջերավոր (եզ, կով) անասունի, ինչպես ոչխարների թիվը մեծ է Գորիսի և մանավանդ Սիսիանի շրջաններում։ Դա բացատրվում է ամառային և ձմեռային արոտատեղերի տարածության ընդարձակությամբ այդ վայրերում։ Այդտեղ է, որ անասնապահությունը երկրագործության կից շատ ավելի խոշոր դեր է խաղում, քան թե Կապանում։

Գոմեշների թիվը մեծ էր Գորիսի շրջանում։ Դա առաջ էր եկել այն բանից, որ Գորիսում գյուղերն ունեին ընդարձակ վարելահողեր հարթ տարածությունների վրա, որոնց խորը վարելու անհրաժեշտությունը ստիպում էր վարել մեծ մասամբ գութանով, իսկ դա պահանջում էր ավելի ուժեղ քաշող ուժ։ Այծերը և խոզերը մեծ տեղ են գրավում հատկապես Կապանի անասնապահության մեջ։ Դա հասկանալի է, քանի որ շրջանը բավականին հարուստ է անտառներով, որտեղ կաղնու ծառի երեք տեսակներն էլ[46] ուժեղ ներկայացված են և որտեղ անտառում արածեցնում են բացի խոզերից, նաև այծերին։

Հետաքրքրական է փոխադրող կենդանիների տեղաբաշխումը։ Ուղտերի մնացորդներին հանդիպել կարելի էր միայն Սիսիանում, նաև Գորիսի շրջանում՝ այն մեծ ճանապարհների վրա, որով Նախիջևանի աղը ուղտերով հնուց փոխադրվում էր դեպի Ղարաբաղ և ավելի հեռու։ Նրանց պահում էին բացառապես աղրբեջանցի տնտեսությունները։ Ջորիների շատությունն աչքի էր ընկնում Կապանում, որտեղ, ինչպես և հարևան Մեղրու շրջանում, Պարսկաստանի մերձավորությունը շատ հին ժամանակներից դյուրացրել էր այդ կենդանու ներմուծումը։ Նախքան Մինջևանից Կապան երկաթուղային ճյուղի կառուցումը ջորիներով էր կատարվում հանքաքարի փոխադրությունը հանքավայրերից մինչև ձուլարան, ինչպես և պատրաստի պղնձի փոխադրությունը դեպի Անդրկովկասի երկաթուղու Եվլախ կայարանը։ Ձին հավասարապես տարածված էր Գորիսի և Կապանի շրջաններում, և գրեթե մեկուկես թվով ավելի Սիսիանում, որտեղ դեռ մինչև ավտոմեքենաների միջոցով խճուղային երթևե-

[46] Quercus iberica, Quercus macranthera et Quercus araxina